սխալների ու վրիպումների պատճառները, ցույց չի տրված դրանց հետագա հաղթահարումը հեղինակի կողմից։ Այստեղ է, որ գրքի այդպիսի էջերը տալիս են համոզչականության տեսակետից։ «Հակահեղափոխության ռեալիստական միանգամից հաստատվում է բանաստեղծի,— կարդում ենք Վ. Տերյանի մասին,— փչում նրա ստեղծագործությունների ու տարակուսանքների շղթան, բայց վերացնում ստեղծագործության մեջ եղած հակասությունները» (էջ 36)։ Ինչ տատանումների ու հակասությունների մասին է խոսքը՝ չի բացատրված։ 20-ական թվականների պոեզիայի բնութագրությանը նվիրված հատվածում նշված է, որ Գ. Մահարին, Ե. Չարենցը, Հ. Սուրխաթյանը «Թույլ են տվել միֆոլոգիական որոշ սխալներ» (էջ 89), բայց թե ինչո՞ւմ էին արտահայտվում այդ սխալները, ո՞րը, ո՞ր հարցում, ի՞նչ պատճառներով՝ ոչ մի պարզաբանում։ Չի բացատրված նաև այն հայտարարությունը, թե «պատմական թեմաներով գրված սոնետների շարքում բանաստեղծը (Ա. Տարոնցին) տուրք է տալիս անցյալի իդեալականացմանը» (էջ 578)։

Կարծում ենք, որ անհրաժեշտ էր ավելի շատ տեղ հատկացնել սովետահայ գրական մամուլի պատմությանը։ 20-ական և 30-ական թվականներին գրական պարբերականները եղել են ստեղծագործական վեճերի ու բանավեճերի կարևոր կենտրոններ, որոշակիորեն տալիս են ավելի գրական մթնոլորտի պատկերացում, մի խոսքով՝ հանդիսացել են ժամանակի գրական կյանքի հայելին։ Ինչևէ, չի կարելի ասել, թե գրական մամուլի մասին գրքում բոլորովին չի խոսվում։ Տեսությունների մեջ անդրադարձ են որոշ գրական հանդեսներ ու թերթեր, բայց դա, մեր կարծիքով, քիչ է և ոչ բավարար։ Հարկավոր էր յուրաքանչյուր ժամանակաշրջանի տեսության մեջ առանձին բաժին նվիրել գրական մամուլին։

Վերջում ուզում ենք ընդգծել, որ նշված թերությունները ու վրիպումները չեն կարող նսեմացնել այն նշանակալից գործը, որ կատարված է սովետահայ գրականության պատմության ստեղծման ուղղությամբ։ «Սովետահայ գրականության պատմության» առաջին հատորը, ամբողջությամբ վերցրած, արժեքավոր և օգտակար ուսումնասիրություն է։ Մեր ցանկություններն ու առաջարկները բխում են գրքի երկրորդ հատորը ավելի կատարյալ ու անթերի տեսնելու ցանկությունից։

Հ. ՏԵԼԵՑՅԱՆ

Е. К. САРКИСЯН, *Экспансионистская политика Османской империи в Закавказье накануне и в годы первой мировой войны*, Ереван, 1962, Издательство Академии наук Армянской ССР, 478 стр., цена 1 р. 77 к.

Ե. Կ. ՍԱՐԳՍՅԱՆ, *Օսմանյան կայսրության նվաճողական քաղաքականությունը Անդրկովկասում առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին և պատերազմի տարիներին*, Երևան, 1962, Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի հրատարակչություն, 478 էջ, գինը 1 ռ. 77 կ.:

Առաջին համաշխարհային պատերազմի պատմությանը, ինչպես հայտնի է, նվիրված են ոչ քիչ թվով ուսումնասիրություններ։ Այդ հարցի առթիվ հանդես են եկել շատ հեղինակներ թե՛ Սովետական Միությունում, թե՛ արտասահմանում, հրատարակված են բազմաթիվ պաշտոնական փաստաթղթեր, հուշեր և այլ նյութեր։ Սակայն տվյալ պրոբլեմի հետ կապված մի շարք հարցեր դեռևս չեն մշակված անհրաժեշտ խորությամբ և լիակատարությամբ։ Դրանց թվին պետք է դասել և այն թեման, որին նվիրված է Ե. Կ. Սարգսյանի մենագրությունը։

Ուսումնասիրության մեջ քննության է առնըվում Անդրկովկասի նկատմամբ թուրքական կառավարության վարած ագրեսիվ քաղաքականությունը առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին և պատերազմի տարիներին։ Գիրքը ներածությունից և վերջաբանից բացի պարունակում է վեց գլուխ. 1. Օսմանյան կայսրությունը առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին։ 2. Երիտասարդ թուրքերի գործակալությունը Անդրկովկասում պատերազմի նախօրյակին։ 3. Օսմանյան կայսրության պատերազմի մեջ մտնելը։ 4. Կովկասյան ռազմաճակատը 1914—1917 թթ.։ 5.

Օսմանյան կայսրության ներքին դրությունը պատերազմի տարիներին։ 6. Օսմանյան կայսրության ագրեսիան Անդրկովկասում և անդրկովկասյան ժողովուրդների պայքարը երիտթուրքական զավթիչների դեմ։

Ն. Ղ. Սարգսյանի աշխատությունը գրված է արխիվային և գրական հարուստ նյութերի հիման վրա։ Սովետական Միության տարբեր արխիվային ֆոնդերում կատարած բազմամյա հետազոտությունների շնորհիվ հեղինակը գիտական շրջանառության մեջ է դրնում նոր փաստեր, նոր փաստաթղթեր, հանգում է հետաքրքիր եզրակացությունների և քննադատում մի շարք հեղինակների սխալ տեսակետները։ Գրքում հատկապես հանգամանորեն քննադատված են այն թուրք պատմաբանները, որոնց աշխատություններում կոպիտ կերպով կեղծված է երիտթուրքերի 1914—1918 թթ. պետական քաղաքականության պատմությունը։ Ռևակցիոն թուրք հեղինակների այդ արդարացի քննադատությունը, հեղինակները, որոնց մասին ի դեպ, մեր պատմագրության մեջ չափազանց քիչ է գրվել, գրախոսվող աշխատության հիմնական արժանիքներից մեկն է։

Գրքում ցույց է տրված, որ թուրք սուլթանների ագրեսիվ ծրագրերում Անդրկովկասը վաղուց ի վեր կարևոր տեղ էր գրավում, որ թուրք զավթիչները այդ երկրամասը դիտում էին որպես Թալանի-կողոպուտի առարկա, որպես ռազմա-ստրատեգիական պլացդարմ ընդդեմ Ռուսաստանի և որպես Հյուսիսային Կովկասը, Մերձվոլգյան շրջանն ու Միջին Ասիան զավթելու հենակետ։ Այսպես էին գնահատում Անդրկովկասի նշանակությունը առաջին համաշխարհային պատերազմի տարիներին նաև երիտթուրքական էքսպանսիոնիստները։

Ն. Սարգսյանն արդարացիորեն քննադատում է և այն հեղինակներին, որոնք միակողմանիորեն մոտենալով հարցին, Օսմանյան կայսրությունը ներկայացնում են միայն որպես կիսագաղութային, իմպերիալիզմի կողմից ճնշված մի երկիր, մոռանալով ընդգծել նաև այն հանգամանքը, որ Օսմանյան կայսրությունը միաժամանակ ագրեսիվ, զավթողական պետություն էր, որ այդ ռազմա-ֆեոդալական, ռևակցիոն բռնապետությունը դաժանորեն ճնշում էր կայսրության բազմաթիվ ոչ թուրք ժողովուրդներին։ Այդ կապակցությամբ գրքում բացահայտված է ազգային փոքրամասնությունների նկատմամբ երիտթուրքերի կառավարող պարտիայի վարած շովինիստական քաղաքականության էությունը, պարտիա, որի նպատակն էր թուրքացնել Օսմանյան կայսրության բոլոր ոչ թուրք ժողովուրդներին։ Ճիշտ է, երիտթուրքերի կառավարության մեծապետական, ասիմիլյացիոն այդ քաղաքականությունը ի վերջո ձախողվեց, սակայն անհամար չարիք պատճառեց արաբներին, հայերին, քրդերին, մակեդոնացիներին և թուրք փաշաների դաժան լծի տակ հեծող մյուս ժողովուրդներին։ Փաստերով հիմնավորված է այն թեզը, որ թեև Թուրքիան կախման մեջ էր իմպերիալիստական տերություններից, թեև գտնվում էր էքսագաղութային վիճակում, բայց և այնպես առաջին համաշխարհային պատերազմի տարիներին ակտիվ զավթողական քաղաքականություն էր վարում ինչպես մյուս հարևան երկրների, այնպես էլ, մասնավորապես, Անդրկովկասի նկատմամբ։

Հեղինակը, անտարակույս, իրավացի է, երբ գրում է, որ Թուրքիան պատերազմի մեջ էր ներգրավվել ոչ միայն Սոյակ միության և հատկապես Գերմանիայի ճնշման ու ջանքերի շնորհիվ, այլև թուրքական կառավարության զավթողական ձգտումների հետևանքով, կառավարություն, որը ցանկանում էր իրականացնել իր պանթուրքական-պանիսլամական ծրագրերը։ Գրքում քննադատված են այն հեղինակները, որոնք երիտթուրքական կառավարիչներին ներկայացնում են որպես կայզերական Գերմանիայի պահանջները անտրտունջ կատարող խղճուկ գործակալներ։ Իհարկե, չի կարելի անտեսել և թերագնահատել Թուրքիայի վրա գերմանական ճնշման նշանակությունը, սակայն չի կարելի մոռանալ նաև երիտասարդ թուրքերի կառավարության սեփական, ինքնուրույն զավթողական նպատակների առկայությունը։

Ճիշտ է, իհարկե, նաև այն թեզը, թե սուլթանական Թուրքիայի և կայզերական Գերմանիայի ռազմական միությունն արդյունքն էր ոչ թե պատահական հանգամանքների կամ Անտանտայի երկրների դիվանագիտական սոխալների, այլ գերմանական և թուրքական ագրեսորների շահերի ընդհանրության։ Ընդգծած իրենց փարիսեցիական, խնամքով քողարկված քաղաքականությանը, երիտասարդ թուրքերը հաճախ չէին քաշվում խոսել Թուրքիայի իրական նպատակների մասին։ Հայտնի է, օրինակ, որ երիտասարդ թուրքերի պարագլուխներից մեկը՝ Էնվեր փաշան հայտարարել թե «մենք կկարողանանք նվաճել ոչ միայն Մակեդոնիան, այլև Կովկասը, Եգիպտոսը ու «Միասնություն և առաջադիմություն» պարտիայի իշխանությունը կդարձնենք աշխարհի ամենահզոր կայսրությունը» (էջ 176)։

Անկասկած սխալվում են այն հեղինակները, որոնք Սոյակ միությանը Թուրքիայի հարելը բացատրում են Անտանտայի երկրների

անտարբերությամբ և նրանց դիվանագետների անգործունեությամբ, որոնք, իբր. նախաձեռնություն և անհրաժեշտ ջանքեր չցուցաբերեցին Թուրքիան իրենց կողմը ներգրավելու ուղղությամբ։ Սարգսյանը ցույց է տալիս, որ անհիմն է այն տեսակետը, թե իբր Թուրքիան կարող էր միանալ Անտանտային, եթե Ռուսաստանը ընդուներ օգոստոսյան բանակցություններում Էնվեր փաշայի առաջադրած պահանջները։ Սակայն գաղտնիք չէ, որ 1914 թ. օգոստոսի սկզբներին Թուրքիայի կողմից չեզոքության հռչակումը և երիտասարդ թուրքերի բանակցությունները Ռուսաստանի հետ նպատակ ունեին միայն ժամանակ շահել և որ 1914 թ. օգոստոսի 2-ի գաղտնի Ռազմական միությունը Գերմանիայի հետ ուղղված էր գլխավորապես Ռուսաստանի դեմ։

Առանձնակի հետաքրքրությամբ է կարդացվում Ե. Սարգսյանի գրքի «Երիտասարդ թուրքերի գործակալությունը Անդրկովկասում պատերազմի նախօրյակին» գլուխը։ Այստեղ հեղինակը նոր նյութեր է բերում այն մասին, թե ինչպես թուրքական կառավարությունը զինվորական, քաղաքացիական և հոգևորական գործակալներ էր ուղարկում Կովկաս, այդ երկրամասի մահմեդականներին իր կողմը գրավելու, նրանց Ռուսաստանի դեմ գրգռելու համար։ Գրքում միաժամանակ ցույց է տրվում, որ չնայած թուրք պատմաբանների այն պնդմանը, թե իբր Կովկասի մահմեդականները նրվիրված են եղել Թուրքիային, իրականում մահմեդական ազգաբնակչության հիմնական մասսան ինչպես պատերազմի նախօրյակին, այնպես էլ պատերազմի տարիներին թշնամաբար էր վերաբերվում Թուրքիայի էքսպանսիոնիստական ծրագրերին։ Փաստերը ցույց են տալիս, որ Կովկասի մահմեդական բնակչությունը չխաբվեց, թուրքական կառավարության հույսերը չարդարացան, նրա այդ ծրագրերը ապարդյուն մնացին։

Խոսելով առաջին համաշխարհային պատերազմի Կովկասյան ռազմաճակատի պատերազմական գործողությունների մասին, հեղինակն իրավացիորեն նշում է, որ այդ ճակատը Թուրքիայի համար պատերազմական գործողությունների հիմնական թատերաբեմն էր, ուր նա կենտրոնացրել էր կես միլիոնանոց մի բանակ, այսինքն երկրի զինված ուժերի 54 տոկոսը։ Սակայն չնայած ռուսական կովկասյան բանակի համեմատությամբ թուրքական բանակի ունեցած թվական գերակշռությանը, երիտասարդ թուրքերի Անդրկովկաս ներխուժելու բոլոր փորձերը 1914—1917 թթ. վերջացան նրանց զորքերի ջախջախումով, մի հանգամանք, որ ցույց տվեց Թուրքիայի կառավարող շրջանների բախտախնդրությունը և նրանց պանթուրքական ծրագրերի սնանկությունը։ Գրքում ցույց է տրված նաև այն, թե ինչպես պատերազմի տարիներին երկիրը տնտեսական քայքայում ապրեց, բարձրացավ ժողովրդական երեսթների նոր ալիք, ուժեղացավ արաբների, բրդերի և օսմանյան կայսրության մյուս ճնշված ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումը։

Հեղինակը հանգամանորեն կանգ է առնում առաջին համաշխարհային պատերազմի տարիների հայկական կոտորածների հարցի վրա։ Նա, անտարակույս, իրավացի է, երբ գրում է, որ «մեկ միլիոնից ավելի հայերի, այդ թվում ծերերի, կանանց ու երեխաների գազանային բնաջնջումը, որն իրագործվեց մերձճակատային մարզից նրանց արտաքսման պատրվակով, Կովկասը գրավելու պանթուրքական ծրագրի բաղկացուցիչ մասն էր» (էջ 424)։ Նկարագրելով հայ ազգաբնակչության անօրինակ կոտորածները և գազանային բնաջնջումը, հեղինակը միաժամանակ ցույց է տալիս, թե ինչպես թուրք ժողովրդի աշխատավորական խավերը չէին բաժանում երիտթուրքական կլիկի արյունոտ բաղաքականությունը և երբեմն ջանում էին իրենց ուժերի ներածին չափով փրկել հայերին։ Գիրքը պարունակում է նաև հետաքրքրական տեղեկություններ այն մասին, թե ինչպես արաբները պաշտպանում և օգնում էին սովյալ հայ գաղթականներին, որոնց թուրքական կառավարությունը արտաքսել էր Միջագետքի խոստաշունչ անապատները։

Այնուհետև աշխատության մեջ բերվում են ուշագրավ նյութեր, որոնք ցույց են տալիս կայզերական Գերմանիայի մասնակցությունը հայկական կոտորածներին։ Այստեղ հերքվում է որոշ պատմաբանների արատավոր կոնցեպցիան, որոնք փաստորեն կրկնելով թուրք կեղծարարներին, երկու միլիոն հայ ազգաբնակչության բնաջնջումն ու արտաքսումը բացատրում են հայերի ապստամբությամբ։

Ե. Սարգսյանի աշխատության մեջ հարուստ փաստական նյութերի հիման վրա լուսաբանված է 1918 թ. թուրքական արշավանքը դեպի Անդրկովկաս։ Գրքում քննվում է Հոկտեմբերյան ռևոլյուցիայից հետո Անդրկովկասում ընտրղծված ռազմա-քաղաքական բարդ իրադրությունը, բացահայտված են կովկասյան ճակատի քայքայման պատճառները, խոսվում է այն աշխատանքի մասին, որ տանում էին Անդրկովկասի բոլշևիկները այդ շրջանում, պատմվում է Անդրկովկասյան հակառևոլյուցիոն պարտիաների՝ մուսավաթականների, վրաց մենշևիկների և դաշնակների անջատողական, դավաճանական քաղաքականության մասին, որը

փաստորեն ջուր էր լցնում երիտթուրքական ագրեսորների ջրաղացին և Անդրկովկասը դառնում թուրքական ինտերվենցիայի վտանգի տակ։ Հեղինակը կանգ է առնում նաև Տրապիզոնի և Բաթումի բանակցությունների հարցի վրա, ցույց տալով, մասնավորապես, թուրքական պատգամավորների զավթողական նպատակները և խարդախ միջոցները։ Նա իրավացիորեն ընդգծում է, որ երիտասարդ թուրքերի էքսպանսիան Անդրկովկասում 1918 թ. հանդիսանում էր 1914—1916 թթ. անհաջող արշավանքների անմիջական շարունակությունը։

Գրքում թուրքական և գերմանական աղբյուրներից բերված են հետաքրքիր նյութեր, որոնք վկայում են թուրքական և գերմանական էքսպանսիոնիստների միջև եղած սուր պայքարի մասին՝ Կովկասի նկատմամբ նրանց զավթողական ծրագրերի հարցում, հանգամանք, որը մինչև այժմ անհրաժեշտ ուշադրության չի արժանացել։

Ե. Սարգսյանը մանրամասնորեն նկարագրում է թուրք օկուպանտների կազմակերպած թալանը, խաղաղ բնակչության մասսայական կոտորածն ու ջարդը Անդրկովկասում 1918 թ.։ Նկարագրելով երիտթուրքական դիվերսիոնության հրեշավոր շարագործությունները Հայաստանի օկուպացված մասերում, հեղինակը միանգամայն իրավացիորեն նշում է, որ Թուրքիայի կառավարող շրջանները Անդրկովկասում շարունակում էին հայերի բնաջնջման իրենց բաղարականությունը։ Գրքում բազմաթիվ հետաքրքրական փաստեր են բերված թուրքական և գերմանական օկուպանտների դեմ Անդրկովկասի եղբայրական ժողովուրդների մղած համատեղ պայքարի մասին։ Ցույց է տրված նաև Սովետական Ռուսաստանի մեծ օգնությունը Կովկասի ժողովուրդներին 1918 թվականին։

Սրանք են գրախոսվող գրքի հիմնական արժանիքները։ Բայց նշենք նաև նրա մի քանի թերություններ։

Իր աշխատության որոշ մասերում, մասնավորապես I գլխի սկզբում (էջ 21—26), հեղինակը խոսում է Օսմանյան կայսրության մեջ իմպերիալիստական երկրների տնտեսական և բաղարական ներթափանցման մասին, խոշոր կապիտալիստական տերությունների թուրքական պետության ունեցած կախվածության և երիտասարդ թուրքերի օրոր Թուրքիայի կիսագաղութային վիճակի մասին։ Սակայն կարևորագույն այս հարցերը թույլ են լուսաբանված, մինչդեռ պետք էր գրանք քննարկել ավելի մանրամասն ու հիմնավորապես։

Գրքում զգալի թվով էջեր են հատկացված Կովկասյան ճակատի 1914—1916 թթ. պատերազմական գործողություններին։ Բայց այդ հարցը լուսաբանված է գլխավորապես Վ. Կոռունի հայտնի գրքերի հիման վրա։ («Сарыкамышская операция», М., 1937; «Эрзерумская операция на Кавказском фронте мировой войны в 1915—1916 гг.», М., 1938; «Алашкертская и Хамаданская операция на Кавказском фронте мировой войны в 1915 г.», М., 1940; «Первая мировая война на Кавказском фронте», М., 1946). Մեզ թվում է, որ այդ թեման բազմակողմանիորեն և խոր ուսումնասիրելու համար անհրաժեշտ էր ավելի շատ օգտագործել Մոսկվայի Ռազմապատմական արխիվում և Վրացական ՍՍՌ Կենտրոնական պետական պատմական արխիվում պահվող այն արժեքավոր պաշտոնական փաստաթղթերը, որոնց մեծ մասը հայտնի չի եղել Վ. Կորունին։

Աշխատության մեջ զգալի ուշադրություն է նվիրված թուրքական կայսրության ներքին վիճակին պատերազմի նախօրյակին և պատերազմի տարիներին։ Արևմտյան Հայաստանի մասին խոսվում է բավականաչափ հանգամանորեն, բայց համեմատաբար թույլ է լուսաբանված դրությունը կայսրության արաբական և այլ պրովինցիաներում, ցույց չի տրված արաբ և մյուս ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարի նշանակությունը երիտասարդ թուրքերի կառավարության զավթողական ծրագրերի ձախողման գործում։

Ինչպես արդեն նշեցինք, գրախոսվող աշխատության մեջ մանրամասն կերպով խոսվում է 1918 թ. թուրք ագրեսորների դեմ Անդրկովկասի ժողովրդական մասսաների մղած պայքարի մասին։ Հայտնի է, որ այդ պայքարում հսկայական դեր խաղաց Բաքվի կոմունան։ Սակայն անհասկանալի է, թե ինչու հեղինակը հարկ չի համարել խոսել Կոմունայի մասին, գերմանա-թուրքական օկուպանտների դեմ նրա մղած հերոսական պայքարի մասին։ Հարկ եղած ուշադրությունը չի դարձված Սարդարապատի և Ղարաբիլիսայի հայտնի կռիվների վրա։

Ե. Սարգսյանի գրքում չեն հիշատակված նրա ուսումնասիրության թեմային վերաբերող մի շարք աշխատություններ (օրինակ, Л. Ерусалимский, Внешняя политика и дипломатия германского империализма в конце XIX в., М., 1951; П. Рорбах, Война и Германская политика, Петроград, 1915; հայերեն և անգլերեն լեզվով մի շարք ժողովածուներ և այլն)։

Գրքում կան կրկնություններ և ձգձգված մասեր. թույլ են ներածությունը և աղբյուրագիտական ակնարկը։ Վերջաբանը իր վրա կրում է շտապողականության կնիքը։

Այս թերությունները, սակայն, չեն արժեզրկում Ե. Սարգսյանի դիրքը։ Մենագրությունը, ամբողջությամբ վերցված, ծանրակշիռ մի ուսումնասիրություն է, ուր քննարկվող հիմնական հարցերը ճիշտ են լուսաբանված, ուր կան նոր, հետաքրքիր հետևություններ ու եզրակացություններ։ Ե. Սարգսյանի ուսումնասիրությունը գրական երևույթ է սովետական արևելագիտական գրականության մեջ։

Ն. ԴԵՂԱՄՅԱՆ

«ԶԱՐԹՈՆՔ»—ԲԱՅԱՌԻԿ, ԲԵՅՐՈՒԹ, 1962, 500 էջ

Վերջին տարիների ընթացքում սփյուռքում լույս տեսան զգալի թվով գրքեր, տարեգրքեր, հուշագրություններ, որոնք բավականաչափ լայնորեն լուսաբանում են սփյուռքի և Սովետական Հայաստանի կյանքը իր բազմազան կողմերով։ Դրանց թվին է պատկանում «Զարթոնք» խորագրով տարեգիրքը, որը լույս տեսավ Բեյրութում, Համազասպ Թերթի 25-ամյակի և ռամկավարների կուսակցության 40-ամյակի առթիվ։ Այն ուշագրավ տեղեկություններ է պարունակում սփյուռքահայ մամուլի, դպրոցների, մշակութային ու հասարակական կազմակերպությունների, սփյուռքահայ գաղութների անցյալի և ներկա վիճակի մասին։ Տարեգրքում հատուկ բաժին է նվիրված Սովետական Հայաստանի գիտական ու կուլտուրական կյանքի լուսաբանմանը։ Առանձնանալ «Զարթոնք»-բացառիկում տպագրված մի շարք նյութերի հետ։ Ըստ տարեգրքում բերված տեղեկությունների, այժմ սփյուռքում հրատարակվում է 127 թերթ և ամսագիր։ Հրատարակվող օրաթերթերի ընդհանուր թիվը, բոլոր գաղութներում միասին վերցրած, կազմում է 13, շաբաթաթերթերինը՝ 26։ Մենք ունենք հայաշունչ գաղութներ, որտեղ լույս են տեսնում պարբերական մամուլի 30-ից ավելի օրգաններ (Ամերիկայի Միացյալ Նահանգներ, Լիբանան)։ Հայկական թերթերի ու ամսագրերի թվարկումը մեզ տանում է Թուրքիա, Սիրիա, Լիբանան, Եգիպտոս, Եթովպիա, Իրանական, Բուլգարիա, Ռումինիա, Արգենտինա, դեպի հեռավոր Ավստրալիա։ Եթե չհաշվենք դաշնակցական մի քանի թերթեր, սփյուռքահայ մամուլի մնացած օրգանները ավելի կամ նվազ չափով կապված են Հայրենի իրականության հետ և ավելի կամ նվազ հետևողականությամբ լուսաբանում են Սովետական Հայաստանի կյանքը։

Տարեգրքի հատուկ բաժնում Ասատուր Մանուկյանը մեզ պատմում է սփյուռքահայ դպրոցների մասին։ Գնահատելի ու խրախուսելի ուսումնասիրություն է կատարել հեղինակը, տալով Լիբանանի, Սիրիայի, Իրանի, Թուրքիայի, Իրաքի, Հորդանանի, Իրանական ի և մյուս գաղութների դպրոցական կյանքի համապատկերը։ Ուսումնասիրության շրջանակներից դուրս են մնացել միայն Հարավային Ամերիկայի հայ գաղութների դպրոցները։ Համագրելով տարբեր գաղութների դպրոցների վերաբերյալ վիճակագրական տեղեկությունները, դժվար չէ նկատել, որ հայկական դպրոցական գործը ավելի լավ է կազմակերպված Մերձավոր և Միջին Արևելքի հայ գաղութներում։ Լիբանանահայ գաղութն այժմ պահում է 66 դպրոց, ուր սովորում է մոտ 14 հազար երեխա։ Դպրոցներում պարտադրվող ուսուցիչների թիվը հասնում է 850-ի։ Սիրիայում կա 64 հայկական դպրոց, ավելի քան 15 հազար աշակերտով։ Զգալի թվով հայկական դպրոցներ կան Իրանում, Թուրքիայում, Իրաքում, Եգիպտոսում և Մերձավոր ու Միջին Արևելքի հայկական մյուս գաղութներում։ Բնականաբար է նշել, որ հայկական դպրոցներ են պահվում այնպիսի փոքր գաղութներում, ինչպիսիք են Եթովպիայի, Սուդանի, Հեղկասասանի, Կիպրոսի, Կանադայի հայ գաղութները։ Կրթական գործը անմիջապես վիճակում է գտնվում այնպիսի մեծ գաղութներում, ինչպիսիք են Ֆրանսիան և Ամերիկայի Միացյալ Նահանգները։ Իսկական իմաստով այստեղ հայկական դպրոցներ գոյություն չունեն։ Եղածները կիսակիսաբաց դպրոցներ են, որտեղ երեխաները շաբաթական երկու-երեք ժամ հայերեն են պարապում։

ԱՄՆ-ի 250 հազարանոց հայ գաղութում այդպիսի դպրոցներում սովորողների ընդհանուր թիվը 2500-ից չի անցնում։ Նույնն է վիճակը Ֆրանսիայում։ Հայտնի է, որ հենց հայկական այս երկու գաղութներում անգի է ունենում ձուլման ուժեղ պրոցես։ Ճանկալի կլիներ, որ շարունակելով իր ուսումնասիրությունները, հեղինակը տար հայկական դպրոցների տեսանելի վիճակի, ուսուցման սիստեմի և դպրոցական կյանքի մյուս կողմերի ամբողջական պատկերը։

Գաղութահայ աշխատավորությունը սրտանական շանթեր է գոծադրում պահելու իր ազգային գոյության հզոր ապդակներից մեկը՝ հայ դպրոցը։ Զուրկ պետական ապահովությունից, միշտ զգալով ուսուցիչների ու դասագրքերի պակասը, հաղթահարելով տեղական իշխանությունների կողմից հաճախ հարուցվող խոչընդոտները, հայ դպրոցները գոյատևում են։ Դրանց գոյությունը, դրանց զարգացումը ապացուցում է, որ հայ ազգաբնակչությունը ամենուրեք ձգտում է պահպանել իր ազգային դեմքը։ Դրանց գոյությունը ապացուցում է, որ հայ ազգաբնակչությունը ամենուրեք ձգտում է պահպանել իր ազգային դեմքը։